ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ

2022թ. հունվարի 03-ին կնքված N ՀՀՀ-ՄԱԾՁԲ-22/2-Պ պայմանագրում փոփոխություն կատարելու մասին

ք. Երևան 17 փետրվարի 2022թ.

«Հայաստանի հանրային հեռուստաընկերություն» փակ բաժնետիրական ընկերությունը, ի դեմս գործադիր տնօրեն Հ. Մովսիսյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, մի կողմից, և

«Հիբրիդ տելեմատիկա» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը, ի դեմս տնօրեն Ա. Օզմանյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, մյուս կողմից

(այսուհետ, յուրաքանչյուրը առանձին՝ Կողմ, միասին՝ Կողմեր), կնքեցին սույն համաձայնագիրը (այսուհետ՝ Համաձայնագիր) հետևյալի մասին.

1. Պայմանագրի 1.1. կետը փոփոխել և շարադրել հետևյալ խմբագրությամբ.
   «1.1. Սույն Պայմանագրով Կատարողը պարտավորվում է Պատվիրատուի հանձնարարությամբ մատուցել Պատվիրատուին պատկանող թվով 20 (քսան) տրանսպորտային միջոցների GPS (Global Positioning System) համակարգի սպասարկման ծառայություններ (այսուհետ՝ Ծառայություններ), իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել Ծառայությունները և վճարել սույն Պայմանագրով սահմանված կարգով:»:
2. Պայմանագրի 3.1. կետը փոփոխել և շարադրել հետևյալ խմբագրությամբ.
   «3.1. Սույն Պայմանագրով նախատեսված Ծառայությունների ընդհանուր արժեքը կազմում է 693 100 (վեց հարյուր ինսուներեք հազար մեկ հարյուր) ՀՀ դրամ, ամսական՝ 58 000 (հիսունութ հազար) ՀՀ դրամ: Սույն կետով նախատեսված ծառայությունների արժեքը ներառում է բոլոր կիրառելի հարկերը, ինչպես նաև Ծառայությունների մատուցման համար Կատարողի կողմից իրականացվելիք բոլոր ծախսերը:»:
3. Պայմանագրի մնացած դրույթները մնում են անփոփոխ:
4. Կողմերն արձանագրում են, որ սույն Համաձայնագրի դրույթները տարածվում ն Կողմերի միջև մինչև Համաձայնագրի ստորագրումը՝ Պայմանագրով առաջացած հարաբերությունների նկատմամբ, մասնավորապես 2022 թվականի փետրվարի 01-ից առաջացած հարաբերությունների նկատմամբ:
5. Սույն Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:
6. Սույն Համաձայնագիրը կնքված է հայերեն լեզվով, երկու օրինակից, որոնք ունեն հավասար իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր Կողմին տրվում է Համաձայնագրի մեկական օրինակ:

«Հայաստանի հանրային հեռուստաընկերություն» ՓԲԸ

Հ. Մովսիսյան
Գործադիր տնօրեն

«Հիբրիդ տելեմատիկա» ՍՊԸ

Ա. Օզմանյան
Տնօրեն